

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՔԱՂԱՔԱՏԵՂ»

Սլավա Սարգսյան

Պատմաբան, հուշարձանագետ

Ամրոց-բնակատեղին գտնվում է Մարտակերտի շղջանի Մաղավուզ գյուղից մոտ 2,5 կմ հարավ-արեւմուտք, Թարթառ (Տրտու) գետի աջ ափի անտառապատ, հարավահայաց, «Սնգրատեղի քար» կոչվող լեռան լանջին: Աշխարհագրական կոորդինատներն N 40 14 27.6, E 46 41 25.4: Ծովի մակերեւույթից բարձրությունը 784 մ է: Այն Արցախ երկրամասի պատմական նշանավոր կենտրոններից մեկն է եղել, որը գոյատեւել է գրեթե ողջ միջնադարում եւ հետագա տարիներին, նկատելի հետք թողնելով հայ ժողովրդի Արցախյան հատվածի պատմության մեջ: Այդ մասին վկայում են ոչ միայն այնտեղ գտնվող շինությունները, այլև արեւելակողմ բարձունքում տեղակայված մատուռի եւ այլ հուշարձանների (խաչքար, տապանաքար) արձանագրությունները¹: Չի բացառվում նաեւ բնակատեղիի առկայությունն ավելի վաղ ժամանակներում, որի մասին կարող են վկայել օրինակ, հնավայրի ներկայիս տարածքի հարավարեւելյան եզրամասում հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն ի հայտ եկած դամբարանները՝ քարարկղային ու կատակոնբային քաղումներով, բնորոշ I-IV դարերին:

XVII-XIX դդ տվյալներով ամրոց-բնակատեղին հիշատակվում է «Քաղաքատեղի»² եւ «Մայրաքաղաք»³ անուններով:

Տեղավայրին անդրադարձած մի շարք հեղինակներ⁴ պատմական աղբյուրներում հիշատակվող «Քերդակուր»⁵ եւ «Կաթողիկոսաքար» (նաեւ Կաթողիկոսասար)⁶ ամրոցները համարում են նույնական, որոնք վերագրվում են ամրոց-քաղաքատեղիին: Որպես հիմք է ընդունվում ոչ միայն Ս. Բարիխուտարեանցի հաղորդումը, ըստ որի պատմական այդ

¹ Ս. Բարիխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 222, Դիվան, Դայ վիմագրության, Եր., 1982, V, էջ 85-96:

² «Քաղաքայ տեղի բերքը» (1724թ.), - Պ. Արյունյան, *Освободительное движение армянского народа в первоый четверти XVIII века*, Москва, 1954, с. 208, «Զրաբերդ բնակավայրի մոտ գտնվող Քաղաքատեղ գյուղում», - Ա. Խօանոսիան, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, Ереван, 1947, с. 242, ճոկ. 27:

³ Ս. Բարիխուտարեանց, Արցախ, էջ 222: Այսանձին ուստումնասիրողների մոտ պահպանվում է նույնիսկ այն կարծիքը, ըստ որի հնանակայրը «Մայրաքաղաք» անունով հիշվում է «սկսած վաղ միջնադարից» (Լեռ, հ. 8, էջ 541, ծան. 27. Բ. Ուլուքարյանի), որը, կարծում ենք, հերու է իրականությունից:

⁴ Բ. Ուլուքարյան, Խաչենի հշիանությունը X-XVI դդ., Եր., 1975, էջ 116, Ս. Կաղանկատվածի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969, ծան. 4. Աղաքելյանի, էջ 289, Ա. Ղույսան, Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանները, Երեւան, 2001, էջ 75: Ըստ XIX դարի պահպանված մի ավանդագրույցի, ամոցը կառուցվել է Վաշագան քաջական քողմից եւ ծառայել որպես անտարահն նստավայր (CMOMPK, XIII, էջ 50, հնմն. Ա. Ղույսան, նշվ. աշխ., էջ 73):

⁵ Ս. Կաղանկատվածի, նշվ. աշխ., էջ 231, 270, կ. Գանձակեցի, Պատմություննայոց, Երեւան, 1961, էջ 198 եւ այլն:

⁶ Ս. Գոշ, Կաթողիկոսը եւ դեկոր Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դպրու, - Դ. Աղջան, Դայապատում, էջ 386^ւ, հնմն. Ա. Ղույսան, Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանները, էջ 73:

տեղավայրը «... մի ժամանակ եպիսկոպոսանիստ աթոռ եղած է»,¹ այլեւ Բերդակուր ամրոցի՝ Յայոց Արեւելից կողմանց կաթողիկոսության ամառանոց եւ կաթողիկոսարան լինելու իրողությունը,² ինչպես նաև՝ «քար»-ի «բերդ» նշանակությունը «Կաթողիկոսաքար» անվան մեջ: Մեր կարծիքով, ընդունելի է այդ մոտեցումը, սակայն մասնակիորեն: Տեղուն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն հետեւության, որ ի սկզբանե կաթողիկոսների ամառանոց եւ նստավայր կարող էր լինել ոչ թե ներկայիս «Քաղաքատեղին», որտեղ տվյալ ժամանակաշրջանի շինությունների հետքեր կամ հնագիտական նյութեր ի հայտ չեն բերվել, այլեւ դրա հյուսիսային վերնամասում՝ լեռան գագաթին տեղակայված ավելի հին ժամանակաշրջանին վերաբերող «Սնգրատեղի քար» կոչվող ամրոցը: Վերջինս ավելի ուշ իր մեջ էր ներառել լեռնալանջի ստորոտում գտնվող «Քաղաքատեղին», որն առաջին հերթին պայմանավորված էր տարածքի հարմարվետությանը (շրջափակված է լեռներով, գտնվում է գրեթե անտեսանելի տեղավայրում, ապահովված է ջրով եւ այլն): Նշենք նաև, որ «քար» անվանումներ ունեցող ամրոցները չեն կարող վերաբերել ձորակներում կամ լեռնալանջերին տեղակայված ամրությունների, դեռ ավելին, այնպիսի պաշտպանական շինությունների, որտեղից տեսանելի չեն այլ ամրոցներ: Դա տվյալ դեպքում վերաբերում է «Քաղաքատեղին», որտեղից ոչ մի արտաքին ամրոց, այդ թվում մոտ 2 կմ հարավ-արեւմուտք գտնվող նշանավոր Զրաբերդը տեսանելի չէ: Կաթողիկոսների ամառանոց-նստավայրը չի կարող անպաշտպան ու անվտանգ տեղավայրում գտնվել: Բերդակուր (Բերդաքար), Կաթողիկոսաքար եւ «քար»-ով այլ ամրոցները ստուգաբանորեն վերաբերում են լեռնային բարձունքների, որտեղից տեսանելի են մոտակա պաշտպանական հանգույցներն ու դիտակետերը, այդ թվում՝ մասնավորապես Զրաբերդ ամրոցը: Ահա թե ինչու նույնական դիտարկվող վերոհիշյալ երկու ամրոցները չեն կարող անմիջականորեն առնչվել «Քաղաքատեղի» ամրոց-բնակատեղիի հետ, բայց գտնվելով մերձակայքում՝ այսպես կոչված «Կաթողիկոսասար» լեռան վրա, ըստ եռության ամրոց-բնակատեղիի հետ պատճական զարգացման որոշակի ժամանակաշրջանում մի ամբողջություն էին կազմում, որն էլ հանգեցրել է աղբյուրներում հիշատակվող այդ ամրոցների եւ «Քաղաքատեղիի» նույնականությանը ուսումնասիրողների մոտ:

¹ Ս. Քարիսուտարեանց, Արցախ, էջ 427, ծամ.:

² Ս. Կաղամկատվացի, նշվ. աշխ., էջ 231, 270, Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 198: Ղմնտ. Բ. Ուլուքարյան, նշվ. աշխ., էջ 116:

Ամրոց-քաղաքատեղին առաջին անգամ ներկայացրել է տեղագրող Ս. Զալայանցը¹, հետագայում, ավելի հանգամանորեն՝ Մ. Բարխուտարեանցը՝ մանրամասն նկարագրելով տեղում եղած շինությունների մեջ մասը: Այն դիտվում է որպես Զրաբերդ գավառի մելիքանիստ բնակավայրերից մեկը, իսկ տարածքում գտնվող ապարանքը՝ Վերագրվում Մելիք Աղամին (XVIII դ), որը նորոգել է կանխավ եղած այդ շինությունը²:

XVIII դարի սկզբին սխնախների ազատագրական պայքարի ժամանակաշրջանում եւ դարի կեսերից հետո, Մելիք Աղամի իշխանության օրոք Քաղաքատեղին մոտակա Զրաբերդ ամրոցի հետ միասին ազգային անկախության պայքարում համախոհ Զրաբերդ-Գյուլիստան միացյալ գավառի ու ռազմաքաղաքական միավորան կենտրոնն էր, կապված այդ պայքարի մյուս օջախների՝ Գյուլիստանի բերդի, Երիցմանկանց եւ Եղիշ առաքյալի վանքերի, Մոխրաբաղի, Թալիշի ապարանք-ամրոցների եւ այլ պաշտպանական ամրությունների հետ³:

Մելիք Աղամի իշխանության հզորացումը նկատելի էր հատկապես XVIII դ 70-ական թվականներից հետո ընկած ժամանակահատվածում, երբ նա եւ Գյուլիստանի Մելիք Յովսեփը իրենց հպատակներով, Շուշիի իբրահիմ Խանի հորդորանքով 1767թ. Գանձակի մոտերքից վերադառնում են իրենց հայրենի տիրույթները⁴: Ըստ եռթյան այդ ժամանակաշրջանում էլ (1767-1783թթ.) իրականացվել էր ապարանքի եւ այլ շինությունների վերակառուցումը, մանավանդ-որ Մելիք Աղամին վերագրվող Մոխրաբաղի ամրոց-ապարանքը եւս կառուցվել է նույն ժամանակահատվածում (1771թ.)⁵:

¹ «Ե աւերակ տեղի քաղաքի ի դժուարակոխ ծորամիջի, յորում են աւերակք բազմաց տանց եւ մեծամեծ ապարանց, ի սան է պալատ քաջազօր իշխանին Մէլիք Աղամայ կառուցեալ սքանչելի ծեւկերպութեամբ, զղորով է արուարձան ընարձակ ի պահապանութիւն նորին, ի վեր քան զայս պալատ է սազածել մատուր կառուցեալ ի թուին Յայոց Զթ ծեռամբ խուռումայ եւ Եղրօրն Կահրամայ շահիմ...»: (Ս. Զալայեանց, ճանապարհորդութիւն ի մեծն Յայսատան, Ա, Տիկիսին, 1842, էջ 177):

² Ս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223-224: Յիմք ընդունելով Ս. Զալայանցի եւ Ս. Բարխուտարեանցի տեղեկությունները, Րաֆֆին նույնպես գրել է, որ «Մելիք Արամը իր բնակության համար նորոգեց քաղաքատեղ կամ Սայրաքաղաք կոչված ավերակների մոտ մի հոյսկապ պալատ, որի մեջ տասներկուերորդ դարու վերջերում բնակվում էր հաշենի եւ Շամբորի իշխան վահրամ շահը» (ստեղծելու ժամանակակից պահին, հ. 10, Երեւան, 1964, էջ 171):

³ Պ. Արյունյան, Освободительное движение армянского народа, с. 226-228. – Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов. Т. II, часть I, Ереван, 1967, с. 113, 282-283: А. Иоаннисиан, Россия и армянское освободительное движение..., с. 15-42, М. Нерсисян. Из истории русско-армянских отношений, альбом, Ереван, 1956, էջ 50, 256. Դարաշրջանի պատմական յրադրության մասին, տե՛ս նաև՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքություններ, հ. 10, Երեւան, 1964, էջ 161-382, Լեռ, հ. 3, գիրք Բ: Դմբան, Ո. Արգարյան, Արցախի քաղաքատեղ բերդավանը, ՊԲՀ, 1988, N 1, էջ 148-149:

⁴ А. Иоаннисиан, Россия и армянское освободительное движение..., էջ 17, М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, էջ 50, 112-113, հմտ. ՊԲՀ, 1988, N 1, էջ 149:

⁵ Ս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 218, Դրամ, V, էջ 94:

Այսպիսով, 1724թ. տվյալներով հիշատակվող «Քաղաքայ տեղի բերթը» ամրոց-քաղաքատեղիի բերդածեւ ապարանքն է, որը մելիքական շինության մնացորդների վրա վերակառուցվել-լրացվել է XVIII դ. 20-ական թվականներին, իսկ դարի կեսերից հետո նորոգվել եւ դարձել Մելիք Աղամի նստավայրը:

Կառուցվածքը¹: Ամրոց-քաղաքատեղին գբաղեցնում է մոտ 50 հա տարածություն: Տեղանքը արեւելքից արեւմուտք ամբողջությամբ թեքադիր է: Արեւելակողման վերջնամաս է դիտվում հնավայրի ամենաբարձրադիր վայրում գտնվող, ներկայունս ավերակված մատուռ-եկեղեցին եւ գերեզմանոցը, իսկ արեւմտյան կողմում՝ քաղաքատեղիին հարող լեռները: Երկու կողմերում էլ տեղակայված են մեկական երկիհարկանի բուրգ-աշտարականեր, որոնց Ս. Բարիուտարեանցն անվանում է դիտարաններ²: Վերջիններս, գրեթե կենտրոնական մասում տեղակայված ապարանքի եւ հյուսիս-արեւմտյան եւ հարավ-արեւմտյան կողմերում գտնվող «Եռաբուրգ» եւ «Կախաղան» կոչվող ամրությունների հետ միասին կազմել են ամրոց-քաղաքատեղիի հիմնական ու անմիջական պաշտպանական հանգույցները³: Թեքադիր տեղանքի սուր հնարավորություններից ելնելով, ամրոց-բնակավայրի ամբողջ տարածքում բնակելի ու տնտեսական շինությունները կառուցվել են անկանոն դասավորվածությամբ: Դրանց մեջ նաև հիմնովին կամ մասնակիորեն ավերված է, շրջափակված ծառերով, մացառուտներով: Նույն անխնան վիճակում է գտնվում նաեւ Քաղաքատեղիի երկայնական առանցքը կազմող հարավ-արեւելքից հյուսիս-արեւմուտք ձգվող միակ ճանապարհը՝ կից արահետներով:

Ամրոց-քաղաքատեղին ունեցել է երկու հիմնական մուտք. «... արեւմտեանն՝ խոր ձորին ստորոտովն, որ համարեա թե հպած է Թարթառ գետի աջ եզերքին, իսկ արեւելեան կողմի նուտքն նույն ձորի վերի ծայրովն: Երկու մուտքերն ամրապնդուած է եղել քարուկիր պատով, որք քանդուած են այժմ: Իսկ մնացեալ կողմերն բնութենաստեղծ եւ անմատչելի ամրութիւններ են, այս է քարձր վիմահերձ եւ քարաժայո քերծեր են եւ ահարկու ձորեր»⁴:

¹ Մեր ժամանակներում ամրոց-քաղաքատեղիի հանգամանալից ուսումնասիրությունը կատարել են ճարտարապետ Արտակ Ղուլյանն ու Ռաֆիկ Արգարյանը (տե՛ս վերը նշված աշխատությունները):

² Ս. Բարիուտարեանց, Արցախ, էջ 222-223:

³ ՊՐՃ, 1988, N 1, էջ 150:

⁴ Ս. Բարիուտարեանց, Արցախ, էջ 222: Խոսքը ձորի երկու կողմերում տեղակայված եւ ամրոց-բնակատեղի տանող հավանական անցուղիները փակող պարսպապատեղի մասին է, որոնց մնացորդները պահպանվում են հատվածներու ձորի արեւելյան հատվածում, որտեղ ի դեպ կատարված հողային աշխատանքների ժամանակ ի հայտ են բերվել նաեւ կավել խողովակներ, որը ցույց է տալիս, որ ամրոց-քաղաքատեղիի ջրամատակարարություն ըստ էռելքան եղել է նաեւ այլ վայրերից:

Հնավայրում պահպանվող շինություններից ուշագրավ է հատկապես իշխանական ապարանքը՝ կառուցված կիսակլոր բուրգեր ունեցող հենապատճեշով ստեղծված արհեստական դարավանդի վրա (չափերը՝ 23,3 x 36,5 մ), ինչի շնորհիվ շրջապատի նկատմամբ իշխող դիրք է գրավում¹: Յյուսիս-արեւելյան կողմից կառուցված հենապատի շնորհիվ, այն գրեթե աննկատ է: Յորինվածքով վերաբերում է XVIII դ եւ վերագրվում Մելիք Աղամին: Պատերը շարված են անկանոն ու մանր տեղական, դեղնանարնջագույն, որձաքարերով ու կրաշաղախով (հաստությունը՝ 0,8-0,9 մ):

Ըստ Մ. Բարխուտարեանցի, «շինութեանս գետնայարկն ծառայած է միայն տեղի զարիվայր դիրքը հարթելու, վերնայարկում կայ տասնեւինը սենեակ, ընդարձակ դահլիճ, խոհանոց, երկու պատշգամբ: Գեղեցկաձեւ տաշուած եւ նախշած ճակատակալ քարեր ունին վառարաններն (բուխարի)»² Արեւելակողմի չորս սենյակները միաչափ են (4 x 7 մ), հաված լանջին եւ ազատ լայնական ճակատներում ունեն մեկական մուտք: Այս սենյակների դիմաց, արեւմտյան դարավանդաեզրին կան դեպի քակ ուղղված եւս չորս միաշարք սենյակներ, որոնցից պահպանվել է միայն բակահայաց ընդհանուր պատը՝ մուտքերով, որմնախորշերով, լայնական պատերի մնացորդներով, իսկ ձորահայաց ճակատամասը փլվել է դարավանդի բրգավոր հենապատնեշի հետ³: Նախամուտքերն ու սենյակները եղել են փայտածածկ: Յորինվածքային միասնականությամբ համակառույցի այս հատվածում նախամուտքերի արեւմտակողմյան երկու եւ ձորահայաց չորս սենյակները ներքին հարդարանքով ավելի վայելուչ են ու հանդիսավոր, քան լանջամերձ չորս սենյակները. պատերը հագեցած են համաչափ դասավորված ու լայն որմնախորշերով եւ ունեցել են լայն պատուհաններ ձորահայաց ճակատի ողջ երկայնքով⁴: Բացի այդ, հատկանշական է, որ ապարանքի արեւելակողմ վերին եզրային սենյակի գետնահարկում փորված է անցք-գաղտնութիւն, որը դուրս է գալիս դարավանդի բրգավոր պարսպապատի տակից բացված մուտքով:

Ապարանքի XVIII շինությունների խումբը կազմում է վերոհիշյալի շարունակությունը: Այն բաղկացած է նախասենյակից՝ կից երկու փոքր գետնահարկ խցերից, երկու այլ սենյակներից եւ խորշածեւ բաժանմունքով դահլիճից (չափերը՝ 3,7 x 7,45 մ): Յին ու նոր կառուցամասերի դիտարկումներից պարզվում է, որ հնավանդ ապարանքից մնացած շինություններին XVIII դ սկզբում ավելացված ներփակ բակով գերանա-

¹ Ա. Դուլյան, ճշգ. աշխ., էջ 79:

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223-224:

³ Ա. Դուլյան, ճշգ. աշխ., էջ 79:

⁴ Նոյն տեղում:

ծածկ սենյակները համակառուցի բնակելի մասն են կազմել, իսկ մելիքական ընդունարան-դահլիճը մնացել է նախկինը՝ խորշաձեւ թաղածածկ դահլիճը՝ հանդիսավոր, լայն ու կամարավարտ բացվածքներով ուղղված դեպի բերդավան ու Թարթառի գեղատեսիլ ձորը: «Քաղաքատեղի» դյոյակ-ապարանքն իր երկու շինարարական շերտերով, հատակագծային ու ծավալատարածական հորինվածքներով եւ կառուցելակերպով դարաշրջանին խիստ բնորոշ պայտական ու ամրաշինական կառուցերի համադրությամբ ստեղծված ու մեզ հասած եզակի հուշարձան է¹:

Ապարանքի մոտ, դեպի արեւելք ձգվող ժայռալանջի թեքության վրա տարածվում են ախոռ-ձիանոցի ավերակները (չափերը՝ 4,1 x 23,9 մ): Մուտքը արեւմտյան կողմից է: Շինությունն ուշագրավ է մուտքի եւ լանջին հպված հյուսիսահայաց պատերին 18 կամարակապ որմնախորշերով՝ նախատեսված ծիերի կայանման ու կերակրման համար: Զիանոց-ախոռից արեւմուտք պահպանվում է մի կիսավեր շինության՝ ծիապանների սենյակը:

Ապարանքից հյուսիս-արեւմուտք, լեռնալանջին տեղակայված է մեկ այլ շինություն (ներքին չափերը՝ 10 x 5,5 մ), որի պատերը պահպանվում են մինչեւ 2,5 մ բարձրությամբ: Բաղկացած է երկու կցակառույց սենյակներից: Շինության հարավային պատը՝ տեղադրված ժայռագլխին, անկյունային աշտարակածեւ կլոր վերջույթներով, արտաքուստ առանձնացված ամրոց-ապարանքի տպավորություն է թողնում՝ որոշակիորեն նմանվելով մերձակա «Եռաբուլգ» կոչվող ամրոցատիպ շինությանը:

Ամրոց-բնակատեղիի ուշագրավ շինություններից է նաև ներկայումս գրեթե ամբողջությամբ ավերակված վիճակում գտնվող բաղնիքը՝ բաղկացած երկու հիմնական կից սենյակներից: Դամենատարար բարվոք վիճակում է գտնվում հարավահայաց ժայռին հպված շինությունը (2,7 x 2,8 մ չափերի), որն ըստ էության ծառայել է որպես լողարան: Ծածկը չի պահպանվում: Ըստ ուսումնասիրողների², այն տաքացվել է հնուց հայտնի սյունիկների վրա բարձրացված հատակի եւ խողովակավոր պատերի միջոցով՝ հնոցից նղված տաք օդով ու ծխով: Զրամատակարումը եղել է բաղնիքից հյուսիս-արեւմուտք, վերնամասում գտնվող «Շոշշան» կոչվող աղբբից, որտեղից ջուրը կավե խողովակներով բերվել է բաղնիքի հյուսիսային վերնամասում կառուցված ջրամբարը, այնտեղից ուղղողվել բաղնիք:

¹ Ա. Ղույամ, ճշվ. աշխ., էջ 81:

² ՊԲՀ, 1988, N1, էջ 161:

Քաղաքատեղին իր բուն տարածքում՝ շրջագծով եղել է պաշտպանված մի շարք պաշտպանական շինություններով ու ամրոց-դիտակետերով:

Հարավ-արեւմտյան ձորակում «Կախաղան» կոչվող ամրոցի ավերակ-ներն են՝ շուրջ 600 քառ. մ տարածքով (չափերը՝ 20 x 30 մ), որի պատերը շարված են տեղական անմշակ քարերով ու կրաշաղախով՝ ամրացված միաստիճան, երկաստիճան եւ եռաստիճան աշտարակաձեւ ելուստներով, 4-7 մ բարձրությամբ: Տարածքը հիմնականում հարթ է, արտաքուստ թերակղզու տպավորություն է թողնում: Այն մեծավմասամբ, հատկապես հարավ-արեւմտյան եւ հյուսիսային հատվածներում շրջափակված է 15-25 մ բարձրությամբ ժայռապատճեղներով: Ունեցել է արեւելյան կողմից բացվող մուտք, որ այժմ հարակից պարսպապատով ավերակված է:

Դնավայրից հյուսիս-արեւմուտք, ճանապարհի արեւելակողմ թեքադիր լանջին պահպանվում են 9,3 x 10,3 մ չափերի, ներքուստ քառանկյուն հատակագծով «Եռաբուրգ» կոչվող շինության ավերակները: Մուտքը արեւմտյան կողմից է: Պատերը շարված են տեղական անմշակ որձաքարերով ու կրաշաղախով, որոնց հաստությունը մինչեւ 1 մ է:

Ուշագրավ են շինության հարավ-արեւմտյան եւ հարավ-արեւելյան անկյունների եւ հարավային պատի կենտրոնական մասում տեղակայված աշտարակները: Մ. Բարխուտարեանցի նկարագրությունից պարզվում է, որ դեռևս XIX դ վերջերին ամրոցը բարվիք վիճակում է եղել. «Յյուսիսային դիտարանի մօտ կայ մի մեծ շինութիւն, որ իւր արտաքին կողմում ունի երեք բուրգ, մեջ տեղում տասն մետրաչափ բարձր քարուկիր սիւն եւ երկու մեծ սենեակներից բաղկացած շինութիւն: Այս է ամենից աւելի հնութիւնն, որ կարծես թէ իւր ամրագին կազմուածքովն ներկայացնում է տեղիս իին իշխողի բնակարանը, որ ունի եւ բնութեան հրաշալի տեսարան»¹:

Ամրոց-քաղաքատեղիի շինությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում հնավայրի հյուսիս-արեւմտյան եւ հարավ-արեւելյան եզրամասերում տեղակայված բուրգ-աշտարակները:

Յյուսիս-արեւմտյան աշտարակը, որն ըստ եռթյան ծառայել է որպես պահակակետ-դիտակետ, տեղադրված է Քաղաքատեղիի բուն տարածքից առանձնացված, բարձրադիր մի հարթակի վրա: Կիսավեր է, պահպանվում է մինչեւ 6 մ բարձրությամբ: Աշտարակը երկիհարկանի է՝ կառուցված անմշակ որձաքարերով ու կրաշաղախով՝ երեսպատված սրբատաշ բաց դաշնագույն քարերով, որոնք ներկայումս չեն պահպանվում (հանվել են

¹ Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223, հմնտ. ՊԲՀ, 1988, N1, էջ 158:

խորհրդային ժամանակներում): Առաջին հարկը հավանաբար ծառայել է որպես պաշտպանների հանգստի սենյակ, իսկ երկրորդ հարկը՝ դիտակետ՝ պաշտպանության տակ առնելով քաղաքատեղիի տվյալ հատվածի մատուցները: Աշտարակի արեւելյան հատվածը, մինչեւ 3,5 մ լայնությամբ քանդված է: Առաջին հարկի թաղի մի մասը չի պահպանվում, իսկ երկրորդ հարկի ծածկն ամբողջությամբ ավերակված է: Շինության առաջին հարկն ունի ներքուստ քառակուսի հատակագիծ՝ հյուսիս-արեւմտյան կողմից բացվող մուտքով եւ դեպի դուրս նեղացող երկու պատուհաններով, որոնք բացվում են աշտարակի հյուսիսային եւ արեւմտյան պատերից: Վերին հարկը հատակագծում ութանկյուն է, ունի երկու պատուհան, որոնք բացվում են հյուսիսային եւ հարավային պատերից:

Մյուս աշտարակը տեղակայված է ամրոց-քաղաքատեղիի հարավ-արեւելյան եզրամասում՝ առանձնացված տեղավայրում: Այն նույնական երկհարկանի է, նույնատիպ, մինչեւ 6 մ բարձրությամբ: Արտաքին սրբատաշ քարերը գրեթե ամբողջությամբ հանված են: Երկրորդ հարկի ծածկը չի պահպանվում: Աշտարակն արտաքուստ կլոր է, որը ստորին հատվածում եզրափակվում է գետնից ոչ այնքան բարձր քառանկյուն ծավալով: Առաջին հարկը ներքուստ ունի խաչաձև հորինվածք (չափերը՝ 4,9 x 5,2 մ): Պարագիծը 14 մ է: Չորս քառանկյուն հենախորշերով (խաչաթեւերով) պարփակված կենտրոնական տարածությունը պսակված է զմբեթով:¹ Գլխավոր մուտքը հարավ-արեւելյան կողմից է, հյուսիսային կողմից բացվում է երկրորդ մուտքը: Ըստ երթյան ունեցել է երկու լուսամուտ, որոնցից մեկը բացվում է արեւմտյան խաչաթեւից: Երկրորդ հարկը դրսից եւ ներսից բոլորակ է: Տրամագիծը շուրջ 5 մ է: Այստեղ պատուհանները բացվում են հարավային, արեւելյան եւ արեւմտյան կողմերից, իսկ մուտքը՝ հյուսիսից:

Դիտակետ-աշտարակի մոտ, հյուսիսային վերնակողմում՝ հաված հարավահայաց լեռնալանջին, գրեթե ամբողջությամբ պահպանվում է մեկ այլ ուշագրավ շինություն՝ ըստ երթյան ամրոցի պահպանների կացարանը՝ ներքուստ թաղակապ եւ կենտրոնից բացվող երդիկով: Կացարանն ունի քառակուսի հատակագիծ (չափերը՝ 4,6 x 4,6 մ): Ծածկը հողաշեն է՝ կրաշաղախով, ներսում կան խորշ-պտրիաններ:

Այսպիսին է ընդիհանուր առմամբ «Քաղաքատեղի» ամրոց-բնակատեղիի համարոտ նկարագիրը:

Ստուգաբանություն: Մեր կարծիքով «Մայրաքաղաք» տեղանվանումը ուղղակի իմաստով (որպես մայրաքաղաք) բացատրելը տվյալ դեպքուն ճիշտ չէ, անկախ նրանից տեղավայրը եղել է իշխանանիստ կամ

¹ Նույն տեղում, էջ 159:

մելիքանիստ, թե՝ ոչ: Տեղացիների մոտ անվանումը շրջանառվում է «Մայրամքաղաք» (Մարիամքաղաք) տարբերակով, որը չի հակասում պատմական զարգացման օրինաչափություններին եւ, մասնավորապես, ամրոց-բնակատեղիի՝ որպես Յայոց Արեւելից կողմանց հոգեւոր կենտրոն լինելու իրողությանը (հմնտ. «Թագավորի աղջիկ» կամ «Սր. Մարիամ» կոչվող սրբատեղի-գերեզմանոց ամրոց-քաղաքատեղից 250-300 մ հյուսիս-արեւելք): Ի դեպ, մասնավորապես XIX դ տեղագրողների եւ հետագա առանձին հեղինակների գրվածքներում «Մայրաքաղաք» է կոչվում նաև նույն՝ Թարթարի գետահովտի Վաղուհաս գյուղի վանքը, որը դարձյալ տեղացիների մոտ շրջանառվում է «Մայրամքաղաք» տարբերակով, որը նույնպես «հնում եղել է նշանավոր, երեմն՝ եպիսկոպոսանիստ»¹ ու գրչության կենտրոններից մեկը:

Այսպիսով, կարծում ենք, որ մասնավորապես XIX դ. տեղագրող Մ. Բարխուտարեանցը (որից օգտվել են հետագայի այլ ուսումնասիրողներ) գոնե այս երկու տեղավայրերի նկատմամբ ցուցաբերել է սուբյեկտիվ մոտեցում՝ Մարիամքաղաքը դարձնելով Մայրաքաղաք՝ անտեսելով սերնդ-սերունդ ժողովրդի մեջ շրջանառվող այդ երեմնի նշանավոր հոգեւոր կենտրոնների անվանումները:

Резюме

Статья посвящена исследованию истории и этимологии одного из средневековых центров исторического Арцаха-крепости-поселения “Кахакатех”. В письменных источниках XVII-XIX вв. крепость упоминается под наименованием “Кахакатех” и «Майракахак». Автор, основываясь на исторических источниках, считает, что истинное наименование крепости «Мариамкак».

Summary

The article is devoted to the study of the history and etymology of one of the Medieval centers of historical Artsakh – the fortress-settlement “Qaghqategh”. In the written sources of XVII –XIX ages the fortress is named “Qaghqategh” and “Mayraqaghqaq”. Basing on historical sources, the author considers the true name of the fortress to be “Mariamqaghqaq”.

¹ Շ. Մկրտչյան, Լեռնայիմ Ղարաքաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 57: